

## Խ Մ Բ Ա Գ Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Հայաստանի Պետական Պատմական թանգարանի աշխատությունների այս ժողովածուն նպատակ ունի լույս աշխարհ հանելու թանգարանի աշխատակիցների պլանային կարգով կատարված այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են Հայաստանի հնագիտության, պատմության և ազգագրության գանագան պլրոբեմներին:

Քանի որ թանգարանը միայն այժմս է ձեռնարկում իր պատերի ներսում կատարվող աշխատանքների արդյունքների հրատարակության, ապա ըոլորովվին զարմանալի չպետք է թվայն հանգամանքը, որ ինչպես այս, այնպես էլ հաջորդ ժողովածուների մեջ հանդիս են գալու երիտասարդ սկսնակ գիտնականներ իրենց անդրանիկ աշխատություններով, մանավանդ որ մեր թանգարանի գիտական աշխատակիցների ճնշող մեծամասնությունը հրիտասարդներ են և միայն այժմս են սկսում ինքնուրույն գիտական հետազոտությունների ձեռնարկել:

Այսուամենայնիվ, ներկա ժողովածուի մեջ հրատարակվող հոդվածները մեր երկրի պատմության համար ունեն կարևոր նշանակություն:

1. «Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո» հոդվածն առաջին անգամ ամփոփում է ըոլոր այն կարեոր հնագիտական աշխատանքները, որոնք ձեռնարկվել և կատարվել են Սովետական Հայաստանում, որտեղ նախքան սովետական կարգերը ոչ մի գիտական հաստատություն գոյություն չուներ և պատահականորեն ձեռնարկվող աշխատանքները, չնչին բացառությամբ, կատարվել են կամ ատարերկացիների և կամ մասնագիտական կրթություն չու-

նեցող սիրողների ձեռքով, որոնք մեծ մասամբ իրենց հայտնաբերած նյութերը կամ տարել են երկրից դուրս և կամ անխնամ վիճակում պահելու հետևանքով փչացել են տեղում, որովհետև չի եղել անզամ քիչ թե շատ տանելի որևէ թանգարան:

Սովորական իշխանության օրով Հայաստանում հիմնվեցին թանգարաններ և գիտահետազոտական հաստատություններ, որոնք ձեռնարկեցին ծրագրված և արդյունավետ խոշոր հնագիտական աշխատանքներ և տեղում պատրաստեցին հնագիտական բարձրորակ կադրեր:

Ճիշտ է, վերջերս „Вестник древней истории“ պարբերականում Բ. Պիոտրովսկին հրատարակեց Անդրկովկասին վերաբերող նման բնույթի մի աշխատություն, սակայն նա իր մեջ ընդգրկում է միայն հնագույն դարաշրջանները մինչև 7-6-րդ դարերը մեր թվականությունից առաջ և վերջացնում է Ռուբարտուով, իսկ հայկական ամբողջ ժամանակաշրջանը, որ մեզ համար ամենահակառակ նշանակությունն ունի, չունի իր մեջ:

Ժողովածուի մեջ զետեղել ենք ընկ. Աս. Շահնազարյանի հոդվածը, որը վերաբերում է Բագրատունյաց նախարարական տոհմի ծագման: Այսանդ հեղինակին հաջողվել է համոզեցնելու շփաստերով ապացուցել այդ տոհմի տեղական ծագումը, որ մինչեւ այժմ կասկածի տակ էր:

Մեր թանգարանի կրտ. գիտ. աշխ. Հ. Մնացականյանի անդրանիկ աշխատությունը, որ վերաբերում է արեապաշտության հարցին, ուշադրավ է նրանով, որ հեղինակը Սևանի ափերին և Սանահնի մոտ գտնված երկու հնագույն բրոնզե գտտիների քանդակների սյուժեն կապել է արեկի կուլտի հետ և ցույց է տվել այդ գոտիների պաշտամունքային նշանակությունը:

Կրտ. գիտ. աշխ. Հոբիփսիմե Զանփոլադյանի հոդվածն ամփոփվում է միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկի, Մխիթար Գոշի կառուցած Նոր Գետիկի վանքին վերաբերող պատմական տեղեկությունները, վանքի պատերի վրայի արձանագրությունները և վանական կառուցվածքների նկարագիրը:

Թանգարանի Առ. Լիպիցյանի անվան ազգագրական բաժնի քուրդ աշխատակից Փիլ. գիտ. թեկնածու Ամինե Ավդալն իր ուսումնասիրության մեջ ցույց է տվել նահապետական ընտանիքում ապրող քուրդ կնոջ ստրկական վիճակը՝ նրա ամբողջ կյանքի ընթացքում, որին կարելի է եղել նույնիսկ ծախել. Այս տեղ նշանակալից է այն հանգամանքը, որ անցյալի այդ անդրադեմ և նախապաշտամած քուրդ կինն այժմ, սովետական կարգերի պայմաններում, դառնալով տղամարդուն իրավահայտարար, ունի բարձր կրթություն ստացած իր ներկայացուցիչների խումբը, որոնք հասարակական պատասխանատու աշխատանքներ են կատարում:

Ժողովածուի հոգվածները դասավորել ենք միմիայն ըստ բովանդակության՝ առանց նկատի առնելու հեղինակների գիտական աստիճաններն ու կոչումները:

